ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

29.04.2023Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: (Զեկուցող Վ. Աղաբաբյան)
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների ամփոփում: (Զեկուցող Վ. Աղաբաբյան)
3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում: (Զեկուցող Վ. Աղաբաբյան)
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:
5. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության արդյունքների մասին: (Զեկուցող Վ. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփումը: Զեկուցողը նշեց, առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները իրականացվել է նախապես

հաստատված ժամանակացույցի համաձայն: Արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, տրվել համապատասխան գնահատականներ: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ավարտին արձանագրված ակադեմիական պատկերը: Զեկուցողը փաստեց, որ ուսանողների կողմից բողոքարկումներ չեն եղել, գնահատականները սահմանված կարգով ներկայացվել են: Քննաշրջանի արդյունքները կից ներկայացված է ***Հավելված 1***-ում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-23 ուստարվա երկրորդ կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Նա ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Զեկուցողը ներկայացրեց, որ ավարտական աշխատանք են իրականացնում «Դիզայն» կրթական ծրագրի IV կուրսի 9 ուսանող և «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի IV կուրսի 8 ուսանող: Թեմաները տրվել են սահմանված ժամանակում: Ուսումնական տարվա ընթացքում, ըստ սահմանված ժամանակացույցի, հանդիպումներ են եղել ավարտական աշխատանքների ղեկավարների հետ, ամբիոնում կազմակերպվել են քննարկումներ, դիտումներ: Զեկուցողը արձանագրեց, որ ուսանողները ներկայացրել են իրենց ավարտական աշխատանքների էսքիզները և կատարած գործը: Աշխաանքները բազմաժանր էին: Ղեկավար դասախոսները փաստեցին, որ աշխատանքները հիմնականում արված էին կիսով չափ, կային նախագծերում շտկումների անհրաժեշտություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. *Ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը գնահատել բավարար:*
2. *Ղեկավարներին հանձնարարել ավարտական աշխատանքները բերել վերջնական տեսքի:*

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ, ղեկավարվելով «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» /2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Զեկուցողը Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ներկայացրեց 2022-2023 ուստարվա «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը **(Հավելված 2):**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2022-2023 ուստարվա Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերիի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը: Զեկուցողը ներկայացրեց, որ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /2-րդ ընթացիկ ստուգումները, քննություններն ու ստուգարքները՝ մայիսի 31-ից մինչև հունիսի 4-ը/, իսկ քննաշրջանը կանցկացվի հունիսի 7-ից հունիսի 25-ը/: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, երկար ժամանակ է փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա II կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի վերջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ամփոփվել են ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական

աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության արդյունքները /http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/12/Hashv_hetaz_ashx_us-23-1.pdf/:

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում հետազոտական աշխատանք իրականացրած 38 ուսանողներից հարցմանը մասնակցել է 32 ուսանող /84%/, ինչը մասնակցության բավականին լավ ցուցանիշ է: Զեկուցողը նշեց, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, ուսանողների կրթական կարիքների վերհանման շրջանակներում, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը: Հարցման նպատակն է եղել բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով:

Զեկուցողը ըստ հարցերի ներկայացրեց վերլուծության արդյունքները: Այսպես.

1. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից

Այս բաժնում ուսումնասիրվել է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքների համար թեմաների ընտրության, կազմակերպման գործընթացին: Նախորդ ուսումնական տարվա համեմատ ուսանողների մասնակցությունը թեմաների առաջադրման գործընթացում աճել է, ինչը վկայում է հետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրության բարձրացման և այդ գործընթացում նրանց ինտեգրման մասին: Ընդ որում, հարցմանը մասնակցած հետազոտական աշխատանքների ղեկավարները փաստել են, որ ուսանողներն ամբողջությամբ կամ մասամբ մասնակցել են թեմաների առաջադրմանը, դա փաստել է նաև ուսանողները: Թեմայի արդիական և հետաքրքիր լինելը խթանում և մոտիվացնում է, ներգրավում է ուսանողին ստեղծագործական աշխատանքի մեջ, բարձրացնում է նրա ձգտումն ինքնուրույն աշխատելու և արդյունքի հասնելու հարցում: Հետևաբար, հետազոտական աշխատանքը պետք է հնարավորինս լինի ուսանողի նախասիրությունների և հնարավորությունների շրջանակներում:

«Մասնակցել եք արդյո՞ք հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը՝ արտահայտելով ձեր ցանկությունները» հարցին պատասխանած ուսանողների 80 %-ը տվել է դրական պատասխան: «Կատարել և ներկայացրե՞լ եք ձեր հետազոտական աշխատանքը» հարցին դրական են պատասխանել բոլոր հարցվողները: Հաջորդ՝ «Որքանո՞վ ձեզ հետաքրքրեց առաջադրված հետազոտական աշխատանքի թեման» հարցին տասներեք ուսանող պատասխանել է, որ այն իր նախասիրությունների շրջանակում է, 12 այլ ուսանողի համար այն ուղղակի հետաքրքիր թեմա է եղել, իսկ 6 ուսանողկատարել է, քանի որ հանձնարարված է եղել:

Հետազոտական աշխատանքի առաջնահերթ նպատակն է ուսանողի մոտ ձևավորել և զարգացնել գործնական կարողությունները և մասնագիտական հմտությունները: Այստեղ նույնպես պետք է փաստել, որ հետազոտական աշխատանքի իրականացումը կատարել է իր առաջնահերթ խնդիրը: Նշենք, որ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են հետազոտական աշխատանքի իրականացումից, որովհետև այս հարցին պատասխանած ուսանողները նշել են, որ այն իրենց տվել է ինքնուրույն աշխատելու ունակություններ, նոր գիտելիքներ,

վերլուծելու կարողություններ, գործնական կարողություններ, դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ։

«Ի՞նչ տվեց Ձեզ հետազոտական աշխատանքը» հարցին պատասխանել են 32 ուսանող՝ տալով մի քանի պատասխան, որից 22-ը պատասծանել է, որ ստացել է նոր գիտելիքներ, 9 ուսանող՝ գործնական կարողություններ, 8-ը՝ մասնագիտական հմտություններ, 9—ը՝ վերլուծական կարողություններ, 10-ը՝ դատողություններ և եզրահանգումներ կատարելու ունակություններ և 13-ը՝ ինքնուրույն աշխատելու ունակություններ։

«Իրականացման տեսանկյունից ձեզ համար ինչ՞ չափով էր բարդ հանձնարարված հետազոտական աշխատանքը» հարցին 19 ուսանող պատասխանել է, որ հեշտությամբ է կատարել աշխատանքը։ 10 ուսանող գտնում է, որ ստիպված նոր բաներ է սովորել, իսկ մեկ ուսանող այդպես էլ չի կարողացել հաղթահարել հետազոտական աշխատանք կատարելու պահանջները։

Ձեկուցողը նշեց, որ պետք է հետևողական լինել հետազոտական աշխատանքների թեմաների ընտրության, նրանց բարդության, ուսանողների կողմից դրանց իրականացման ընթացքի և որակի հարցում։ Պետք է ուսանողների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ ուղղորդելով նրանց ճիշտ աշխատելու և հետազոտելու գործում, նրանց մոտ բարձրացնել մոտիվացիան և հետազոտական աշխատանքի կարևորությունը։

Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից

Աշխատանքի իրականացման գործընթացում շատ կարևոր է ղեկավարի ճիշտ դիրքորոշումը և աջակցության ձևն ու չափը։ Նախ ուսանող-ղեկավար համագործակցության մեջ ուսանողը պետք է հստակ գիտակցի իր ինքնուրույն աշխատելու կարևորությունն ու պահանջը, և ճիշտ գնահատի այն իրավիճակները, որտեղ պետք է ակնկալի ղեկավարի աջակցությունը։ Իսկ ղեկավարները պետք է ուսանողներին սովորեցնեն ինչպես աշխատել ինքնուրույն և ինչպես հասնեն արդյունքների։

Հետազոտական աշխատանք կատարելու երեք տարիների փորձը և ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մեր ուսանողները ղեկավարներից ավելի մեծ աջակցություն են ակնկալում, քան կարելի է։ Այդ պատճառով էլ բավարարված չեն ղեկավարների աջակցությունից։

«Դասախոսը Ձեզ ծանոթացրել է արդյո՞ք հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը» հարցին 28 ուսանող տվել է դրական պատասխան, իսկ 3 ուսանող գտնում է, որ մասամբ է ծանոթացվել։

2. Ուսանողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքից

Ձեկուցողը նշեց, որ ուսանողների կատարած աշխատանքից բավարարվածության արդյունքները նախորդ բաժնի արդյունքների նույն պատկերն են արտացոլում։ Արդյունքները ցույց են տալիս, թե ուսանողները հետազոտական աշխատանքի իրականացման և արդյունքների ձևակերպման ո՞ր գործընթացում են դժվարացել, և որը հաղթահարել հեշտությամբ։ 15 ուսանողներ վկայել են, որ ամբողջովին կարողացել են պլանավորել հետազոտական աշխատանքը ինքնուրույն կատարելու ընթացքը, իսկ 16-ին՝ մասամբ է հաջողվել։ 24 ուսանող կարողացել է ինքնուրույն ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականության նշանակությունը, իսկ 6 ուսանող գտնում է, որ իր մոտ մասամբ է ստացվել։

Որքանո՞վ է Ձեզ մոտ ստացվել ինքնուրույն…» հարցը բաղկացած է եղել մի քանի ենթակետերից։ Հավաքագրել անհրաժեշտ գրականություն ամբողջովին հաջողվել է 23 ուսանողի, իսկ մասամբ՝ 7 ուսանողի։ Գրեթե նմանատիպ պատասխաններ ենք տեսնում անհրաժեշտ գրականությունից օգտվելու (25/5), ձեռք բերած արդյունքները ներկայացնելու (25/5), եզրակացությունները ձևակերպելու (24/6), իր կատարած աշխատանքը ներկայացնելու (27/3) հարցերի պատասխանների վերլուծությունում։

3. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Հետազոտական աշխատանքների գնահատման գործընթացի առաջնային քայլը լիարժեք իրականացված է։ Ուսանողները տեղեկացված են եղել աշխատանքի գնահատման չափանիշներից։ «Որտեղի՞ց եք ծանոթացել հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշներին» հարցին 28 ուսանող նշել է, որ

գնահատման չափանիշները ներկայացրել է դասախոսը, 4 ուսանող՝ իմացել է մասնաճյուղի կայքէջից։ Ցավալի է, որ 1 ուսանող ընդհանրապես ծանոթ չի եղել գնահատման չափանիշներին։ «Որքանո՞վ են Ձեր կարծիքով ճիշտ ընտրված հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները» հարցին ուսանողներից 18-ը գտել է, որ ամբողջովին ճիշտ է ընտրված։ 12 ուսանող գտնում է, որ գնահատման չափանիշները մասամբ է ճիշտ ընտրված, իսկ 1 ուսանող գտնում է, որ ընտրված չափանիշները սխալ են ընտրված։

«Բավարարվա՞ծ եք հետազոտական աշխատանքի համար ձեր ստացած գնահատականից» հարցին 1 ուսանող պատասխանել է, որ ինքն ավելի բարձր է ստացել, քան սպասում էր, 26 ուսանող իր ստացած գնահատականը համարում է իր կատարած աշխատանքին համապատասխան, իսկ 4 ուսանող՝ ոչ։

Այնուհետև, պատասխանելով առաջադրված բաց հարցերին, ուսանողները մի քանի խնդիրներ են նշել։ Մասնավորապես՝ 7 ուսանող նշել է գրականության և նյութերի հավաքագրման հետ կապված խնդիրներ (գրականության և նյութերի բացակայություն, կամ սղություն, հայերեն լեզվով նյութերի բացակայություն, ծավալուն նյութերի հավաքագրման դժվարություն), մասնագիտական գրականության պակասը։

Այս ամենը ի նկատի ունենալով՝ արվել են առաջարկություններ։ Ըստ այդմ՝ առաջարկում են հետազոտական աշխատանքը զատել դասընթացից և դարձնել անկախ՝ կուրսային աշխատանքի նման և նրա գնահատականը չներառել դասընթացի միավորների մեջ։ Առաջարկվել է նաև հետազոտական բաղադրիչներ ունենան շատ ժամաքանակ ունեցող առարկաները և հետազոտական աշխատաքի կատարման համար հատկացնել հավելյալ ժամեր։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Դ. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ

Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաներից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն։

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2022-2023 ուս.տարի II կիսամյակ

Առաջադիմությունը

ընթ.քնն.1 19/04/2023

N:	Առարկայի անունը	Ուս.քանակը		Միջին գնահ.		0-ների քանակը		2,3-ների քան.		4,5-երի քան.	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
	Դիզայն (գեղար)										
	Կուրս Դ I										
1	Նկարչություն -2	5	2	3.20	4.00			3		2	2
	Կուրս Դ II										
1	Գծանկարչություն-4	6	2	4.67	5.00					6	2
2	Գունանկարչություն-4	6	2	4.83	5.00					6	2
	Կուրս Դ III										
1	Գծանկարչություն -6	12	3	2.25	3.67	2		4	1	3	1
2	Դիզայնախագծ.-2-հաց.մոդ.կամպ-2	12	3	4.00	5.00	2				10	3
	Ընդամենը՝ Դիզայն (գեղար)			*3.61*	*4.50*						
	Կիրառական արվեստ										
	Կուրս ԿԱI										
1	Նկարչություն -2	10	3	3.50	3.67			5	1	5	2
2	Գունատեսություն	10	3	3.00	4.00			5		4	3
	Կուրս ԿԱII										
1	Գծանկարչություն-4	8	3	4.13	4.67			1		7	2
2	Գունանկարչություն-4	8	3	4.63	5.00					8	3
3	Գործ.գեղ.ձևավորում-3	8	3	4.50	4.67					8	2
	Կուրս ԿԱIII										
1	Գործվածքի գեղ.ձևավորում-5	9	3	4.56	5.00			2		7	3
2	Գծանկարչություն-6	9	3	4.11	4.67			2		7	2
3	Մանրանկարչություն	9	3	3.67	4.67			4		5	2
	Ընդամենը՝ Կիրառական արվե			*3.97*	*4.54*						
	Ընդամենը ֆակուլտետում՝			3.84	4.53						

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2022-2023 ուս.տարի II կիսամյակ

Առաջադիմությունը

ընթ.ստ.1 19/04/2023

N:	Առարկայի անունը	Ուս.քանակը		Միջին գնահ.		0-ների քանակը		6,7,8-երի քան.		9,10-երի քան.	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ
	Դիզայն (գեղար)										
	Կուրս Դ I										
1	Նկարչություն -2	5	2								
	Կուրս Դ II										
1	Քանդակագործություն-2	6	2	6.83	7.50			3	2	1	
2	Համակարգչային գրաֆիկա-2	6	2	8.50	9.50					5	1
	Կուրս Դ III										
1	Գունանկարչություն-6	12	3	6.50	7.67	1		10	2	1	1
	Ընդամենը՝ Դիզայն (գեղար)			*5.86*	*6.33*						
	Կիրառական արվեստ										
	Կուրս ԿԱII										
1	Փայտի գեղ. մշակում-1	8	3	9.25	9.00			2	1	6	1
2	Համակարգչային գրաֆիկա-2	8	3	6.63	9.00			3	1	2	1
3	Քանդակ և պլաստիկ մոդել.-1	8	3	7.13	7.00			7	2		
	Կուրս ԿԱIII										
1	Մետալի գեղ. մշակում-2	9	3	8.00	9.33			5		4	1
2	Գունանկարչություն-6	9	3	7.11	9.00	1		2		5	3
3	Խեցեգործություն-1	9	3	9.33	9.67			2		7	2
4	Ապակենկարչություն	9	3	8.00	10.00	1				7	3
	Ընդամենը՝ Կիրառական արվե			*7.93*	*9.00*						
	Ընդամենը ֆակուլտետում՝			7.26	8.20						

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ _____

ՀՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԱՇԱՅԱՆ

«___» _____ 2023թ.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2023Թ. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ «ԳԾԱՆԿԱՐ» ԵՎ «ԿՈՄՊՈԶԻՑԻԱ» ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1.	Աղբալյան Նունե Յուրիի	- նախագահ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետի, «Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման» ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ նկարիչների միության անդամ
2.	Ասատրյան Համլետ Միհրդատի	- անդամ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ, դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ
3.	Ղուլիջանյան Կարապետ Հայկազի	- անդամ, Կողբի գեղարվեստի դպրոցի տնօրեն
4.	Մանուկյան Զարուհի Ֆերդինանտի	- անդամ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետի, «Գծանկարչության և գունանկարչության» ամբիոնի դոցենտ, ՀՀ նկարիչների միության անդամ,